

րեր ,աւելի լաւ կ'երեւայ, թէեւ նշանակելի կերպով աւելի վատ տեսակ է:

«Երբ հայերը եւ ուսերը իրենց մետաքսը կը ծրարեն, ընդհանրապէս իրենց կաժերուն գլուխները կը սանտրեն՝ զնոզները խարելու համար: Ասիկա մետաքսը աւելի կը վատթարացնէ, վնասելով անոր փաթաթման ատեն: Այս ժողովուրդը բնաւ ուղղամտութեան մէջ համբաւ չէ ունեցած, երկար ատեն կեղծ ծրարելու արուեստը գործադրած է: Ծիշդ այդ պատճառաւ Զմիւռնիոյ եւ Հալէպի մէջ, ուր հայերը իրենց մետաքսը կը ծախեն մեր Թուրքիոյ Ընկերութեան ներկայացուցիչներուն, ինչպէս նաեւ Ռուսիոյ մէջ, յաճախ իրենց ապրանքը մերժուած է, մասնաւորաբար երբ անդադար պայման կը դնեն իրենց հակերը չբանալ՝ բացի կաժերու գլուխներուն կողմէն:

«Գիլանի մէջ մետաքսի գինը կը բարձրանայ օտար ապրանքներու համեմատութեամբ, բացի երբ շատ մեծ նուազութիւն կայ, ինչպէս վերջերս: Բրիտանական Կասպեան առեւտուրին ժամանակ, մենք պաթմանին համար 12-էն

18 դրաուն տարբերութիւն գտանք: Ընդհանրապէս գինը 15 է, սակայն այս վերջի երկու երեք տարիներու ընթացքին ուսերը եւ հայերը 30-էն 40 դրաուն վճարած են»:1)

Նոյն հեղինակը այլուր կը վկայէ, որ «Երպաֆ մետաքսը, որ մեր Գիլանի ներկայացուցիչներուն միջոցաւ գնուած եւ Ռուսիոյ վրայով Անգլիոյ զրկուած էր, գտնուեցաւ, որ փառնտին երկու շիլինկ նուազ է քան թէ Պարսկական շրպաֆը, որ Թուրքիայէն կը ներածուի, որովհետեւ առաջնոյն վատնումը միայն հարիւրին տասն է, մինչ վերջնոյնը հարիւրին 20, վերջոյն պատճառը ըլլալով հայոց խարդախ ծրարումը»:2)

1) British Trade... Va. I, էջ 289-291: Հետաքրքրական են նաեւ սիւրիական չերամարուծութեան մասին Շուէտացի բժիշկ-ուղեգիր Հասըլգուխդի (1749-1752) տուած ծանօթութիւնները որոնք, սակայն, հոս զանց կ'առնեմ:

2) Անդ՝ էջ 314:

